

## ԳՐԻՍՈՎԱԿԱՆ—ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Երգեցողութիւնի Հայաստանեաց ս. Եկեղեցոյ  
բազմաձայն մշակմամբ Ռ. Դ. Մոսկուա.

Այս վերնագրի տակ երաժշտական հեղինակութիւնների  
յայտնի հրատարակիչ Պ. Երգեհնառն սկսել է պրակներով լոյս  
ընծայել մեր հայ եկեղեցական երգերից և շարականներից։ Մինչև  
այժմ լոյս է տեսել չորս պրակ։

Մի զեղեցիկ միտք է, որ պ. Ռ. Դ. ի մէջ առաջացել' է. արդէն  
խոլ ժողովրդականացած Եւրոպական նոտաներով մատչելի դար-  
ձնել մեր եկեղեցական ամենաշատ երգուող և յայտնի դէսքե-  
րում ու հանդիսաւոր օրերում կը կնուող շարականներն ու տաղերը։  
Արանք պատկի, հանգստեան և թարգմանչաց տաղերն ու շարա-  
կաններն են, որոնք ներդաշնակուած են քառաձայն խմբի համար։

Ա. տետրակում զետեղուած է երեք տեսակ «Տէր Ողորմիա»,  
որոնցից առաջինը և երրորդը պ. Ռ. Դ. անուանել է աւանդական  
եղանակ. թէ ի՞նչ է նշանակում աւանդական եղանակ, որտեղից է  
վերցրել և կամ որտեղից է ձայնագրել հեղինակը, մեզ յայտնի  
չէ. խոլ երկրորդը պատարագի Բ.Չ. Տէր-Ողորմեան է, որն անուա-  
նել է Եջմիածնի եղանակ։

Բ. տետրակում զետեղուած են «Հանգստեան» տաղեր և շա-  
րականներ՝ երկու—երեք տեսակ ձայնադրուած։ որը Եջմիածնի  
եղանակ անուան և որը աւանդական եղանակ անուան տակ, թէ  
քառաձայն և թէ երկձայն։

Գ. տետրակում զետեղուած են սլսակի ծիսակատարութեան  
ժամանակ երգւող տաղերն ու շարականները՝ փոխ առնելով Զայ-  
նագրեալ շարականից։

Դ. տետրակում թարգմանչաց և Հայրապետոց շարական-  
ներն են, որոնց հեղինակը յորելիանական անուան է տուել, ի  
նկատի ունենալով այս տարուայ տառերի գիւտի 1500 և տպա-  
գրութեան 400 ամեայ մեծ յորելիանները։

Հեղինակը, ինչպէս երևում է, քաջ ծանօթ է Հայկական ե-  
կեղեցական ձայնագրութեան և շատ հմուտ կերպով կարողացել է

Հայկականից թարգմանել Եւրոպականի և ըստ տեսական օրէնքների ներդաշնակել խառն խմբի համար:

Անշուշտ, շատ դժուար գործ է առանց մի ձայն անզամ փոխելու կամ կրճատելու, Հայկականի բոլոր խաղերն անզամ վերածել Եւրոպականի և այս յաջողութել է պ. Ռ. Դ. ին. Սիրունու ու ներդաշնակ լուսւմ են «Ի վերինն Երուսաղէմ», «Որ զշնորհս», «Հրաշագիտ» ևայլն շարականները:

Ակկորդները շատ սահուն են յաջորդում միմեանց, տեսական օրէնքները զանց չեն տոնուած. շատ լաւ են վճռուած սեպակկորդները, որոնք մի եղանակի զարդն են կազմում:

Դեղեցիկ գործ է ոկսել պ. Ռ. Դ. և խրախուսանքի արժանի մի գործ. ցանկալի է, որ այս ուղղութեամբ էլ առաջ զնարկ գեղեցիկ ներդաշնակութեամբ հարացացնէր մեր եկեղեցական երդեգութիւնը:

Գներն էլ շատ մատչելի են՝ Ա. թ. 30 կ. Բ. 60 կ. Դ. 70 կ. Ե. 50 կ. յանձնարարութեամբ մեր ուսուցիչ խմբավետներին:

**Փուրեա արեգայ**

### ԱՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.

Մագարիս արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, Հայոց պատրիարք եկեղեցւոյ անցրերը սկիզբէն մինչև մեր օրերը յարուից տղային պարագաներով պատմուած. 1—10 պրակտ. Կոստանդնուպոլիս, 1912—1913, պրակտ զին է 50 կոտէր:

Խ. И. Кучукъ-Иоаннесовъ, Старинные армянские рукописи и армянские надписи, находящиеся въ предѣлахъ Россіи и некрологъ Г. А. Халатъянцъ, Москва, 1912.

Հ. М. Меликсеть-Бековъ, Рукопись Шаракана XV вѣка, открытая въ Одессѣ, Тифлисъ, 1913.

Աւետարան բատ Մարկոսի Զէյթունի պատմաբարարապու, Կոստանդնուպոլիս, 1913.

Գրիգոր արք. Գրիգորեանց, Սոխակ Հայաստանի, 10-րդ տպագրութիւն, Բագու, 1912.

Տիակ և Տառ, Գիրք-ին ձագման և միջազգային ու Հայկական տպագրութեան վրայ ձգուած ուկնարկ մը Հայ տառերու գիւտին հաղոր հինգ հարիւրամեակի և Հայ տպագրութեան Հորեգորեան կրկնակ յորելեաններուն տոթիւ, Կոստանդնուպոլիս, զին է 7 ֆրանկ:

